ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐ.

Կոնդակ Շամախու թեմի առաջնորդ Տ. Անանիա արքեպիսկոպոսի անունով, որով կոնսիստորիայի ատենադպիր Շահվերդեանը տկարութեան և ծերութեան պատճառով ազատ համարուեց՝ համաձայն առաջնորդի միջնորդութեան և առաջադրուեց տալ նրան մինչև 1910 թուի վերջը 500 ռ., իսկ այնուհետև տարին 600 ռ. կենսաթոշակ։ 8 սեպտ. թ. 1995։

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որի հետ ուղարկուեց Մայր Աթոռի օգտին նուիրաբերած Ներք. Ադուլեցի Ներսիսեան եղբայրներից մի հարիւր (100) ռուբլին. 8 սեպտ. թ. 1998։

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով առաջադրուեց կազմել և մատուցանել Նորին Ս. Օծութեան մինչև առաջիկայ դեկտեմբերի սկիզբը Մայր Աթոռի և բոլոր վանքերի անշարժ կալուածների ցուցակը (ինվենտար)։ 8 սեպտ.թ. 2022.

— Աստրախանի թեմի Ղարաջալիլ գիւղի եկեղեցական—ծխական Հոգաբարձութեան անունով՝ նորաբաց դպրոցի հաստատութեան առթիւ. 13 սեպտ. թ. 2049.

— Արժ. Ա. Մատթէոս քահանայ Մանիկեանի անունով, որով հաստատուեց Ամերիկայի Ուստըր քաղաքի հայոց հոգևոր հովիւ։

Նոյն մտքով կոնդակ Ամերիկայի Ուստր քաղաքի Ս.Փրկիչ եկեղեցու Հոգաբարձութեան 13 սեպտ. թ. թ. 2051 2052։

Գրութիւն Վրաստանի թեմի հայոց առաջնորդի անունով, որով տեղեկութիւն պահանջուեց Արդուինի հայ լուսաւորչականների և հայ կաթոլիկների միջև գերեզմանատան խնդրի առիթով տեղի ունեցած տարաձայնութեանց մասին։ 18 Սեպտ. թ. 2061.

—Մակագրութեամբ թոյլ-տրուեց Վրաստանի թեմի Առաջնորդին տալ սարկաւագութեան աստիճան կոյս Փրիստինէ Աղաջանեանին. 18 սեպտ. թ. 2064։

—Գրութիւն Հին Խրիմի Ս. Խաչ վանքի վանահօր անունով, որով յանձնարարուեց վանքի տնտեսական կառավարութեան համար ընտրել տալ հոգաբարձուներ և մատուցանել Նորին Սրբութեան ի հաւանութիւն և ի հաստատութիւն. 18 սեպտ. թ. 2078.

Կոնդակ Ղարաբաղի թեմի Աւետարանոց գիւղի եկեղեցական ծխական դպրոցի նորընտիր հոգաբարձութեան անունով, որով հոգաբարձուները և անձնափոխանորդները հաստատուեցին իրենց պաշտօններում։ 18 սեպտ. թ. 2080։

Գրութիւն Շամախու թեմի առաջնորդ Տ. Անանիա արքեպիսկոպոսի անունով, որով շնորհակալութիւն յայտնուեց ուղարկած չորս ձեռագրի համար։ 20 սեպտ. 2082։

Գրութիւն Մայր Աթոռի մատենադարանապետի անունով, որի հետ ուղարկուեցին յիշեալ չորս ձեռագրերը մատենադարանում զետեղելու համար։ 20 սեպտ. թ. 2083։

Կոնդակներ Տ. Տ. Դանիէլ, Ստեփան, Եփրեմ, Մկրտիչ, Կարապետ, Բաբգէն, Զաւէն, Սմբատ, Թորգոմ և Խորէն նորապսակ եպիսկոպոսների անունով, որոնց շնորհուեցին եպիսկոպոսական պանակէներ։ 20 սեպտ. թ. 2087—2096։

Նոյն նորապսակ եպիսկոպոսներին կոնդակ-վկայական եպիսկոպոսական ձեռնադրութեան համար 23 սեպտ. թ. 2106—2115։

Մակագրութեամբ բեկանելով Նուխու եկեղեցիների թեմական պատգամաւորների ընտրութիւնը, պատուիրուեց Ղարաբաղի կոնսիստորիայի նախանդամ Տ. Եղիշէ վարդապետին ընտրել տալ՝ Կովկասի Տ. փոխարքայի ժամանակաւոր կանոնների համաձայն, իւրաքանչիւր եկեղեցուց մի պատգամաւոր. 23 սեպտ. թ. 2103։

Կոնդակ Ղարաբաղի թեմական ժողովի նախագահող Տ. Եղիշէ վարդապետի և անդամների անունով, որով հաստատուեց թեմական ժողովի քննութեան ենթարկելի խնդիրների օրակարգը։ 23 սեպտ. թ. 2105։

— Երուսաղէմի պատրիարքական տեղապահ Տ. Դանիէլ եպիսկոպոսի անունով, որին շնորհուեց արքութեան տիտղոս 23 սեպտ. թ. 2116։

— Կ. Պոլսի ամենապատիւ Պատրիարքի անունով, որին տեղեկութիւն տրուեց եպիսկոպոսների ձեռնադրութեան մասին. 23 սեպտ. թ. 2118։

— Կտուց անապատի միաբանութեան անունով, որով տեղեկութիւն տրուեց անապատի վանահայր Տ. Ստեփան եպիսկոպոսի ձեռնադրութեան մասին. 23 սեպտ. թ. 2119։

— Երևանի թեմական խորհրդի անունով, որով պ. պ. Թադէոս Խզմալեանը և Տիգրան Ռաշմաճեանը հաստատուեցին թեմական տեսչի պաշտօնում։ 29 սեպտ. թ. 2135։

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ուղարկուեց Վանայ Ռուսաց փոխ-հիւպատոսից նուէր ստացած Հայոց Տիգրան Բ. արքայի ոսկէդրամը՝ Մայր Տաճարի թանգարանում ապահով պահելու համար։ 29 սեպտ. թ. 2140։

Գրութիւն Կարսի փոխանորդի անունով, որով պատուիրուեց Բասենի Կրդապաղ գիւղի Դաւիթ քահանային վերադարձնել հայրենիք։ 30 սեպտ. թ. 2150։

Գրութիւն Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու ծխական հոգաբարձութեան անունով, որով պատուիրուեց վիճակի երեք գիւղական դպրոցներին որոշուած նպաստը տալ։ 30 սեպտ. թ. 2151։

Վեհափառ Հայրապետը դիւանի գրութեամբ, թ. 2054. սեպտ. 15-ին յանուն Ալէքսանդրոպոլի առևտրական ուսումնարանի տեսչի, թոյլ տուեց պ. Երուանդ Տէր Մինասեանին յիշեալ դպրոցում կրօն դասաւանդել։ Պ. Երուանդ Տէր Մինասեանը օգոստոսի 20-ին խնդրել էր պետական միջնակարգ ուսումնարաններում կրօն դասաւանդելու արտօնութիւն և ի լրումն այդ խնդրի սեպտ. 14-ին մատուցել էր Նորին Սրբութեան հետևեալ խոստմնագիրը. «Ձերդ Վեհափառութեան պահանջի համաձայն սրանով պատիւ ունեմ խոնարհաբար յայտնելու, որ ես միանգամայն համաձայն եմ Ձեր դրած պայմանին աւանդել ինձ յանձնուելիք կրօնական առարկաները Հայաստանեայց եկեղեցու վարդապետութեան համաձայն։

Խնդրում եմ՝ բարեհաճէք պատուիրել յայտնելու Առևտրական դպրոցի պ. տեսչին, որ Ձերդ Սրբութեան կողմից այլ ևս արգելք չկայ ինձ կրօնական առարկաներից դասեր յանձնելու։»

Հայրապետական զոհունակութիւն եւ օրհնութիւն.

Կոնդակ օրհնութեան Շամախու վիճ. կոնսիստորիայի նախկին ատենադպիր պ. Աբրահամ Շահվերդեանի անունով նրա քառասուն և իննամեայ հաւատարիմ ծառայութեան առթիւ։ 8 *սեպտ. թ.* 1996.

— *Գոհունակութեան և օրհնութեան Գրոզնա քաղաքացի Տիկ. Մարիամ և պ. Գրիգոր Բէգլարեան ամուսինների անունով տեղական եկեղեցու զանգակատունն իրանց ծախքով շինելու համար։* 22 *սեպտ. թ.* 2099։

Հայրապետական պարգեւատրութիւն.

Կոնդակներ Երուսաղէմի վանքի միաբաններ՝ Տ. Արիստակէս վարդապետ Խաչատրեանի, Տ. Աւետիս վարդապետ Յովհաննիսեանի և Տ. Պօղոս վարդապետ Շահնազարեանի անունով, որոնց, պատրիարքական Տ. Տեղապահի միջնորդութեան համաձայն, շնորհուեց վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք. 20 *սեպտ. թ.* 2084, 2085 *և* 2086։

Կոնդակներ Նիկոպոլսի վիճակի Սիս գիւղի առաքելոց վանքի միաբան Տ. Վաղինակ վարդապետ Թորիկեանի և Սեբաստիայի ազգային վարժարանաց տեսուչ Տ. Շաւարշ վարդապետ Սահակեանի անունով, որոնց, (իրանց առաջնորդների միջնորդութիւնների համաձայն), վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 30 *սեպտ. թ.* 2154 *և* 2155։

Այս պարգևատրութիւնների կոնդակները յատուկ կոնդակով ուղարկուեցին Ի Պօլսոյ Ամենապատիւ Պատրիարքին ի գիտութիւն և հասուցանելու յիշեալ վարդապետներին։

ԲԱՂՈՒԱԾ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Սեպտ. 1-*ին, թ.* 539. *Սինոդը լսեց Բեսսարաբիայի նահանգի Բելցի քաղաքի բնակչուհի հանգուցեալ Մարիամ Ֆոքշանեանի կտակի գործը, որով հանգուցեալը ի միջի այլոց կտակում է իւր* 400 *դեսեատին տարածութեան կալուածի արդիւնքի* $^1/_4$-*մասը իբրև թոշակ Հայ-լուսաւորչական աղքատ երեխաների կրթութեան, արական և իգա-*